ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 24.05.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԱՄ-2017/03

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) քննելով «Ռադոն» ՍՊԸ-ի կողմից 12.05.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2017/03 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Ռադոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Ռադոն» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 12.05.2017թ. բողոքով հայտնել է, որ սույն թվականի ապրիլի 10-ին «Երևանի հ. 171 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ171ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ի թիվս այլ մասնակիցների՝ Ընթացակարգին մասնակցելու հայտ են ներկայացրել նաև «Ռադոն», «Արգոհշին» և «Էլիտ Հիլզ» ՍՊ ընկերությունները:

Պատվիրատուն բավարար է գնահատել վերը նշված 3 մասնակիցների հայտերը: Սակայն Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, քանի որ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի հայտում վճարման պահանջագրի 12-րդ կետում արձանագրվել է խախտում, մասնավորապես սխալ է հաշվարկվել առաջարկված գնային առաջարկի 2 տոկոսի գումարի չափը, որը պետք է կազմեր 116 640 ՀՀ դրամ, սակայն այնտեղ նշվել է 102 000 ՀՀ դրամ: «Արգոհշին» ՍՊԸ-ի հայտի վճարման պահանջագրի 15-րդ կետում նույնպես արձանագրվել է խախտում,

մասնավորապես, վերջինիս կողմից սխալ է նշվել գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՔ171ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրի փոխարեն նշվել է՝ «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01»:

Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 44-րդ և 45-րդ կետերով սահմանված պահանջները, քանի որ Օրենքի 31-րդ հոդվածով ամրագրված է, որ մասնակիցների հայտերը պետք է գնահատվեն հրավերով սահմանված կարգով: Ընթացակարգի հրավերի օրինակելի ձևով սահմանվել է վճարման պահանջագրի օրինակելի ձևը, որում առկա է նույն պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգը, որի 15-րդ կետում պետք է հստակ նշվի այն ընթացակարգի ծածկագիրը, որին մասնակցում է տվյալ կազմակերպությունը, իսկ Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է հայտի ապահովման ենթակա վճարման գումարի չափը, որը պետք է պակաս չլինի առաջարկվող գնի 2 տոկոսից, որն էլ պետք է նշվի վճարման պահանջագրի 12-րդ կետում:

Ընկերությունը գտնում է, որ վերոհիշյալով պայմանավորված՝ Պատվիրատուն պետք է արձանագրեր Օրենքի 29-րդ և 31-րդ հոդվածների խախտման փաստը և Կարգի 44-րդ և 45-րդ կետերի համաձայն մերժեր մասնակիցների հայտերը, քանի որ հրավերին անհամապատասխան գնային առաջարկը և վճարման պահանջագիրը ենթակա չեն շտկման և հայտը ենթակա է մերժման:

Ընկերությունը բողոքով ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է դադարեցնել (չեղյալ և/կամ անվավեր ճանաչել) «Երևանի թիվ 171 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ԵՔ171ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին և «Արգոհշին» ՍՊԸ-ին հաղթող ճանաչելու մասին որոշումները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 18.05.2017թ. ժամը 15:00-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. <u>«Երևանի հ. 171 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Երևանի հ. 171 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը 16.05.2017թ. թիվ 0630 գրությամբ հայտնել է, որ «Ռադոն» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքը համապատասխանում է իրականությանը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրել է բոլոր հայտերը, սակայն չի պատկերացրել, որ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն կարող է սխալ հաշվարկել գնային առաջարկի 2 տոկոսը, որի պատճառով չի մերժել մասնակցի հայտը: Իսկ «Արգոհշին» ՍՊԸ-ի պարագայում վճարման պահանջագրում չի նկատվել ծածկագրի սխալ լինելը, քանի որ բոլոր տեղերում նշված է եղել ճիշտ «ԵՔ171ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագիրը, որի պատճառով չի մերժվել նաև «Արգոհշին» ՍՊԸ-ի հայտը:

Նշված գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ ընդունում է իր կողմից թույլ տրված վրիպակները և արտահերթ նիստում, օրենսդրությամբ սահմանված կարգով, կընդունի համապատասխան որոշում:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 18.05.2017թ. ժամը 15:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ բողոքի վերաբերյալ որևէ առարկություն չունի, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել վրիպակ:

<u>3. ԳԲԽ-ԱՄ-2017/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2017/03 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի հ. 171 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից «Երևանի հ. 171 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ171ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «Ռադոն», «Էլիտ Հիլզ» և «Արգոհշին» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի հրավերով նախատեսվել է հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի անբաժանելի մաս կազմող վճարման պահանջագրի հետևյալ օրինակելի ձևը՝

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[1] N *(մասնակցության հայտի ապահովում)*	
2. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.	
3. Ընկերություն (այսուհետ՝ վճարող)՝	
4. Վճարողի բանկը՝	
5. Վճարողի հաշվի համարը՝	
6. Վճարողի ՀՎՀՀ՝	
7. Վճարողի ՀՎՀ՝	
8. Շահառու՝ << Երևանի. 171 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ	
9. Շահառուի ՀՎՀՀ՝ *00820698*	
10. Շահառուի բանկը՝ *Զարգացման հայկական բանկ ԲԲԸ*	
11. Շահառուի հաշվի համարը /հշ.N/ *1810003041290100*	
12. Գումարը թվերով և բառերով՝	
13. Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ AMD	
14. Գործարքի /վճարման/ նպատակը՝ պայմանագրի ապահովում (տուժանք)	
15.Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ *<<ԵՔ171ԴՊ-ՊՀԱՇՀԲ-17/01>>*	
16.Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը 17. կից՝ --- էջ	
19.ա. Շահառուի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 19.բ. Կ.Տ.	18.ա. Վճարողի ստորագրությունները՝ /_____/ /_____/ 18.բ. Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից 20.ա. /_____/ /ստորագրություն/ 20.բ. Կ.Տ. "___" ___ 20___ թ.	Կատարված է վճարողի բանկի կողմից 21.ա. /_____/ /ստորագրություն/ 21.բ. Կ.Տ. 22.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

3. «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ՝ ինքնարժեք, շահույթ, ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով, որի ընդհանուր գինը կազմել է 5 832 000 ՀՀ դրամ:

4. «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացվել է վճարման պահանջագիր, որի 1-ին սյունակում նշվել է «պայմանագրի կատարման ապահովում», 12-րդ սյունակում՝ «Գումարը թվերով և բառերով» դաշտում լրացվել է 102 000 (մեկ հարյուր երկու հազար), 15-րդ սյունակում՝ «Գնման ընթացակարգի ծածկագիրը» բառերի փոխարեն նշվել է «Պայմանագրի ծածկագիրը» բառերը:

5. «Արգոհշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրին կից ներկայացվել է վճարման պահանջագիր, որի 1-ին սյունակում նշվել է «պայմանագրի կատարման ապահովում», 15-րդ սյունակում՝ «Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՔ171ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01»» բառերի փոխարեն նշվել է «Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01»» բառերը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2017թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Էլիտ Հիլզ» և «Արգոհշին» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են որպես հրավերի պահանջներին համապատասխանող (բավարար):

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.05.2017թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Արգոհշին» ՍՊԸ-ն ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն՝ հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից:

4.<u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ռադոն» ՍՊԸ-ի 12.05.2017թ. բողոքը, «Երևանի հ. 171 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 16.05.2017թ. թիվ 0630 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ մասնակիցը հայտով՝ սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում:

Կարգի 44-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հայտերի բացման նիստում նույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է՝ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին.

Նույն կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ հայտի ապահովումը:***

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ***բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան,*** ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Երևանի հ.171 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԵՔ171ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի հրավերի 9-րդ հավելվածով սահմանվել է տուժանքի համաձայնագրի անբաժանելի մասը կազմող մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրի ձևը, ինչպես նաև «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգով» նախատեսվել է դրա լրացման կարգը:

«Էլիտ Հիլզ» և «Արգոհշին» ՍՊ ընկերությունների մասնակցության հայտերը «ԵՔ171ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.04.2017թ. ժամը 09:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող: Մինչդեռ Խորհուրդն արձանագրում է, որ նշված ընկերությունների կողմից հայտերի ապահովումը ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան: Մասնավորապես, «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ տուժանքի մասին համաձայնագրի անբաժանելի մասը կազմող հայտի ապահովման վճարման պահանջագրի 1-ին սյունակում նշվել է «պայմանագրի կատարման ապահովում», 12-րդ սյունակում՝ «Գումարը թվերով և բառերով» դաշտում լրացվել է 102 000 (մեկ հարյուր երկու հազար), մինչդեռ նշված ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի երկու տոկոսը կազմում է 116 640 ՀՀ դրամ, 15-րդ սյունակում՝ «Գնման ընթացակարգի ծածկագիրը» բառերի փոխարեն նշվել է «Պայմանագրի ծածկագիրը» բառերը: «Արգոհշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման վճարման պահանջագրի 1-ին սյունակում նշվել է «պայմանագրի կատարման ապահովում», իսկ 15-րդ սյունակում՝ «Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԵՔ171ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01»» բառերի փոխարեն նշվել է «Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ180ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01»» բառերը:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ «Էլիտ Հիլզ» և «Արգոհշին» ՍՊ ընկերությունների հայտերը գնահատելով բավարար, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գործել է ոչ իրավաչափ, քանի որ Կարգի 44-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են***

հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը կամ ***հայտի ապահովումը,*** իսկ նույն Կարգի 45-րդ կետը սահմանում է, որ հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված ***հայտի ապահովումը շրկման ենթակա չէ:***

Ուստի Խորհուրդը, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում է, որ «Ռադոն» ՍՊԸ-ի կողմից 12.05.2017թ. ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ռադոն» ՍՊԸ-ի 12.05.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել և դադարեցնել «Երևանի թիվ 171 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կարիքների համար կազմակերպված «ԵՔ171ԴՊ-ՊԸԱՇՁԲ-17/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Էլիտ Հիլզ» և «Արգոհշին» ՍՊ ընկերությունների ներկայացրած հայտերը հրավերի պահանջներին համապատասխան (բավարար) գնահատելու մասին որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի անդամ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**